

Գ. Աֆել-Վերլին մատուռը Ս. Խաչի խորանին ճիշդ հարաւային անկիւնը¹.

Ե. Ս. Յակոբ Մծբնայ հայրապետի մատուռը Ս. Կարապետի խորանին հիւսիսային անկիւնը, որ միջնագոռուով մը հաղորդակցութեան մէջ գրուած է Ս. Լուսաւորչի խորանին հետ²

Զ. Ս. Հրեշտակ-շեռաց մատուռը, որ Ս. Կարապետի հարաւային կողմն է, միջնագոռուով մը կը հաղորդակցի: Ազատ գուռ մ'ալ ունի բակին հետ: Ունի գուռ մըն ալ հիւսիսային անկիւնը, Եկեղեցւոյ ետեւը երթալու, թէեւ փակ կը մնայ:

Եկեղեցիներն՝ ամէն շինութեան ատեն փոփոխութիւն մը կրած է: Վերջին փոփոխութիւնը 1888ին եղաւ, երեք եկեղեցիներուն իրարու «խառնմամբ»³: Այս փոփոխութեան մէջ նշանակելի է Շէնքի ճակատը, որ Եկեղեցւոյ բակին մէջ շինուելէք շէնքերուն տեղ բանալու համար՝ ներս քաշուած եւ վերանորոգուած է բոլորովին:

Ս. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ 1799ԻՆ ՎԵՐԱՅԻՆՈՒԹԻՒՆԸ

Կոլտի շինած եկեղեցին հրոյ ճարակ եղաւ 1771 Փետրվ. 7ին, եւ 28 տարի, 6 ամիս եւ 12 օր աւերակ մնալէ ետքը, Մինաս Խալֆայի ճարտարապետութեամբ նորէն շինուեցաւ 1799ին Սեպտ. 18 — նոյեմ. 13, յիսուն վեց օրուան մէջ Չարչոյ անգամ եւ օծուեցաւ Գանիէլ պատրիարքի ձեռքով:

Այս վերաշինութեան պատմութիւնը գրի առնուած է Ժամանակակցի մը կողմէն, զոր նոյնութեամբ յառաջ կը բերենք:

1 Անտարակոյս այս շատ փոքրիկ մատուռը Ս. Խաչի Ա-անդարունը կամ պահարանն էր միջնորմներու բացուելէն յառաջ, եւ ետքը Աֆել-Վերլին պատկերին յատուկ մատուռ մ'եղաւ՝ այդ պատկերին գիւտէն ետքը:

2 Նոյնպէս Ս. Յակոբն ինչպէս հիմայ Ս. Լուսաւորչին Աւանդատունն է կամ պահարանը, իսկ Ս. Հրեշտակապետն ալ՝ Ս. Կարապետի: